ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԸՆՏԱՆԵԿԱՆ

Օ Ր Ե Ն Ս Գ Ի Ր Ք

Հոդված 77. Ամուսինների՝ միմյանց ապրուստի միջոցները հոգալու պարտականությունները

Ամուսինները պարտավոր են նյութապես օժանդակել միմյանց:

Այդպիսի օժանդակությունը մերժվելու և ալիմենտ վճարելու վերաբերյալ ամուսինների միջև համաձայնության բացակայության դեպքում դրա համար անհրաժեշտ միջոցներ ունեցող մյուս ամուսնուց դատական կարգով ալիմենտ պահանջելու իրավունք ունի՝

ա) անաշխատունակ անապահով ամուսինը.

բ) կինը՝ հղիության ընթացքում, ինչպես նաև ընդհանուր երեխային խնամող ամուսինը մինչև երեխայի երեք տարին լրանալը.

գ) անապահով ամուսինը, որ խնամում է ~~մանկուց հաշմանդամ ընդհանուր երեխային կամ առաջին խմբի հաշմանդամ~~ հաշմանդամություն ունեցող ընդհանուր երեխային կամ առաջին խմբի հաշմանդամություն ունեցող անձ ճանաչված կամ ֆունկցիոնալության խորը աստիճանի սահմանափակում ունեցող չափահաս զավակին:

Հոդված 78. Ամուսնալուծությունից հետո նախկին ամուսնուց ալիմենտ ստանալու իրավունքը

1. Նախկին ամուսնուց, որը նյութական բավարար միջոցներ ունի, դատական կարգով ալիմենտի պահանջի իրավունք ունի՝

ա) նախկին կինը՝ հղիության ընթացքում, ինչպես նաև ընդհանուր երեխային խնամող ամուսինը մինչև երեխայի երեք տարին լրանալը.

բ) անապահով նախկին ամուսինը, որը խնամում է ~~մանկուց հաշմանդամ ընդհանուր երեխային կամ առաջին խմբի հաշմանդամ~~ հաշմանդամություն ունեցող ընդհանուր երեխային կամ առաջին խմբի հաշմանդամություն ունեցող անձ ճանաչված կամ ֆունկցիոնալության խորը աստիճանի սահմանափակում ունեցող- զավակին.

գ) անաշխատունակ անապահով նախկին ամուսինը, որը ~~հաշմանդամ է դարձել~~ հաշմանդամություն ունեցող անձ է ճանաչվել մինչև ամուսնալուծվելը կամ ամուսնալուծվելուց հետո՝ մեկ տարվա ընթացքում.

դ) անապահով ամուսինը, որը կենսաթոշակային տարիքի է հասել ամուսնալուծության պահից սկսած հինգ տարում, եթե ամուսինները տասնհինգ և ավելի տարի գտնվել են ամուսնության մեջ:

2. Ալիմենտի չափը և ամուսնալուծությունից հետո նախկին ամուսնուն դա տրամադրելու կարգը կարող է որոշվել նախկին ամուսինների համաձայնությամբ: